ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4757-Ա «24» նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.64 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 20.11.2025թ. հ.Ն/69235-25 գրությունը, «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 21.06.2023թ. տրված եզրակացությունը՝ «Երևան քաղաքի, Էրեբունի վարչական շրջանի, Ավանեսովի փակուղու հ.12 շենք, հասցեում գտնվող «Երևանի հ.64 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ» և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1.Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.64 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ից:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի հ.64 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ